ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N2319 - Ա **08 ապրիլի 2009թ.**

ԱՅԳԵՍՏԱՆԻ 11-ՐԴ ՓՈՂՈՑԻ Հ. 169 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՅԾԱՌ ԱՐՇԱԿԻ ՆԱԶԱՐՅԱՆԻ, ԼԵՎՈՆ ՄԵԼԻՔԻ ՆԱԶԱՐՅԱՆԻ, ՍԵՐԳԵՅ ՄԵԼԻՔԻ ՆԱԶԱՐՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Պայծառ Արշակի Նազրյանի (ծնված 09.05.1937թ.), Լևոն Մելիքի Նազարյանի (ծնված 26.01.1964թ.), Սերգեյ Մելիքի Նազարյանի (ծնված 29.07.1958թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Այգեստանի 11-րդ փողոցի հ.169 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 319.94քմ, որից 237.8քմ մակերեսով հողամասը Պայծառ Արշակի Նազրյանին, Լևոն Մելիքի Նազարյանին, Սերգեյ Մելիքի Նազարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է (վկայականներ տրված 19.02.1996թ. հ.1854, 03.09.1998թ. հ.022472), (323քմ մակերեսով հողամասից օգտագործվում է 237.8քմ մակերեսով հողամասը): Օրինական հողամասին կից օգտագործվող 83.14քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 1976 թվականը, 25.11.2008թ. ժառանգության իրավունքի վկայագիրը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանման 04.12.2008թ. հ.6664ա գրությունը, Երևանի քաղաքապետարանի <<Քաղաքաշինություն>> ՊՓԲԸ-ի 26.03.2009թ. հ.20-Ել-2334 եզրակացությունը, համաձայն որի Այգեստանի 11-րդ փողոցի հ.169 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով <<Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Այգեստանի 11-րդ փողոցի հ.169 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Պայծառ Արշակի Նազրյանի, Լևոն Մելիքի Նազարյանի, Սերգեյ Մելիքի Նազարյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 237.8քմ մակերեսով հողամասին կից 83.14քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 83.14քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանման կողմից։

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

4. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Պայծառ Արշակի Նազրյանի, Լևոն Մելիքի Նազարյանի, Սերգեյ Մելիքի Նազարյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

5. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Կենտրոն թաղապետարան։

6. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

7. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ